

սաւորութեան եկեղեցւոյ, ի դուռն սուրբ Կարապետին որ ի Տարաւն» (իմ աշխատութիւնս, էջ 186): Այս Յովհաննէս վարդապետն է, որ Պլուզէն ալ խնդրած էր Քերականի մեկնութիւնը:

Կայ Յովհաննէս վրդ. Մշեցի կոչուած մը, որ հօրեղբայրն էր Գլաճորի համալսարանին համբաւաւոր Ներսէս Սասնեցիի: Գուցէ Քերականին մեկնութեան խնդրող եւ քաջաբերող Յովհաննէս վրդ. Տարաւնեցին կարենանք նոյնացնել Մշեցիի հետ, որուն մասին ղժբախտաբար բան մը չենք գիտեր:

Սակայն հաւանական է որ Յովհաննէս վրդ. Տարաւնեցի, որ Պլուզը յորդորած էր Քերականի Մեկնութեան խմբագրութեան, նոյնպիսի խնդրանք մըն ալ կատարած ըլլայ Մովսէս վրդ. Երզնկացիի, երբ վերջինս կը յորդորուի պատրաստել Մեկնութիւն Պատարագի մը, որ կ'աւարտէր 1293ին եւ իր հեղինակի յիշատակաբանին մէջ կը վկայէր, որ նոյն այդ 1293 տարին կը մեռնէր զինքը հեղինակութեան յորդորող իմաստուն բարունապետ Յովհաննէսը:

Պլուզի Քերականի Մեկնութեան զրուսեմ, որ Յովհաննէս վրդ. Տարաւնեցի «կացեալ էր ժամանակս յոլովս ի պաշտան սպասաւորութեան եկեղեցւոյ». ուրեմն տարիքը առած էր՝ երբ Պլուզ կ'աւարտէր իր Քերականի Մեկնութիւնը 1293էն առաջ:

Իսկ արդէն ըսինք, որ Պլուզէն ծանօթ է յիշատակարան մը 1323 թուականէն (Սաղէմի թիւ 318), որով անոր մահը 1293ին նշանակել անընդունելի է: Պլուզի մահը ուրեմն պէտք է պահել 1326ին կամ 5ին:

Պլուզ եւ Ծործորեցի գատորոշ մականուններն են այս երկու մեծ մատենագիր Երզնկացի Յովհաննէսներուն:

Պլուզ կոչուած է Յովհաննէս Երզնկացիին իր կարճախառակ ըլլալուն համար, ինչպէս որ կ'ընդունի նաեւ Ղազար Զահ-

կեցի: Բոլորովին սխալ է կապոյտ (կապուտաշուի) թարգմանել ՊԼՈՒԶ: 1451ին կը յիշուի պլուզ դուռ մը որ անտարակոյս փոքր կամ ցած ըլլալուն համար այդպէս կոչուած է (Սխուան, էջ 544): Երզնկացիները մինչեւ մեր օրերը պատկիին կ'ըսէին պլուզիկ:

Իսկ Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցիին այնպէս կոչուած է՝ երկար ատեն Արտաշու Սբ. Թադէի վանքը ի Ծործոր գործած ըլլալուն համար, թէեւ Կամախեցի՝ Եկեղեցի դաւառին ինչ որ ծորակին պատճառաւ Ծործորեցի կոչուած կը նկատէ:

Սրապեան՝ Ծործորեցիի մասին կենսագրական մանրամասնութիւններու մէջ չի մտնէր: Ծործորեցիի մասին եւ երկար գրած եմ Ա. հատորին մէջ (էջ 236-253):

Ծործորեցիին միշտ մասնաւոր խնամքով մը կարծես կը շնորհէ իր տարբերիլը իրմէ երէց Յովհաննէս Երզնկացի Պլուզէն: Ան միշտ իր մասին կը յիշէ նախ Երզնկացի ըլլալը եւ յետոյ Ծործորեցի կոչուիլը:

Ա. հատորին հրատարակութենէն վերջ էր որ 1954ի Ապրիլին, Վենետիկ Ս. Ղազար հանդիսեցայ Ծործորեցիի մէկ նորագիւտ ձեռագրին, եւ Բազմավայր նոյն տարուան Օգոստոս-Հոկտեմբեր թիւին մէջ հրատարակեցի յօդուած մը «Յովհաննէս Երզնկացի-Ծործորեցի (Նորագիւտ նիւթեր Ս. Ղազարու մէկ նոր ձեռագրէն)» խորագրով:

Հոս պիտի չուզէի կրկնութիւններ ընել, որով զանց կ'ընեմ այս մասին երկարել, միայն ըսեմ որ այս ձեռագրով կը յայտնուի որ Ծործորեցի Երզնկայի մերձ Պարկանց գիւղը ծնած է, մինչ Պլուզ դարձեալ Երզնկայի մերձ Արկայ գիւղը ծնած էր:

Ծործորեցի՝ Կիրակոս Երզնկացիի (Երզնկայի մերձ Աղբակ գիւղը ծնած) եղբորորդին է, եւ կ'երեւի թէ նախնական ուսումն ալ անոր քով ասացած եւ անոր հետ է ճամբորդած եւ աշխատակցած:

Աշխատութիւնս լրացած էր, երբ Պայ-ֆարի (օրաթերթ, 26 Ապրիլ 1958) մէջ, իբր թէ Պլուզի եւ Ծործորեցիի նոյն անձը ըլլալուն համար կարգացի ողբալի՝ եթէ ոչ զաւելտական գրութիւն մը, ուր իբր սպացոյց կը տրուէր հետեւեալ յիշատակարանը:

«Արդ, զրեցաւ սուրբ աւետարանս ի սուրբ եւ ի փառաւորեալ աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ... ի թուականութեանս Հայոց ՊԶԱ. (1432), ձեռամբ յոդնամեղ եւ ապրիկար գրչի Մինաս սուտ անուն քահանայի, ի ստոյգ եւ յընտիր աւրինակէ, որ էր գրեալ ձեռամբ բազմաբուստ գրչի Յովհաննէս Ծործորեցի սպասաւոր բանի Երզնկեցի, որ մականունս պլուզ կոչեցեալ»:

Ասիկա կեղծիք մըն է, չինուած իմ չիլեանի ԺԵ. դարու Յիշատակարաններու հաւաքածոյին Ա. հատորին էջ 429էն, եւ յարակից ուրիշ յիշատակարաններու զանազան մատերէն:

Յովհաննէս Երզնկացի երբեք ինքզինքը լուի Ծործորեցի չէ կոչած, այլ միշտ կը յիշէ ինքզինքը իբր «Յովհաննէս Երզնկացի» կամ «ԳՅով» եւ այժմ կոչիմ Ծործորեցի» կամ «ԳՅով» հաննէս ծանօթ բանի եւ տեղեւ Երզնկացի, իսկ այժմ Ծործորեցի» (տես նաեւ «Յովհաննէս Ծործորեցի սպասաւոր բանի Երզնկեցի»... ինչպէս որ կեղծուած յիշատակարանը անկարելի կերպով ունի: Այս Երզնկացի վարդապետը կոչուած է

երբեմն «Յովհաննէս վարդ. Ծործորեցի», ուրիշներէ եւ ոչ իրմէ:

Ո՛չ ալ Յովհաննէս Ծործորեցի ՍՈՎՈՐԱԿԱՆ Աւետարան գրող գրչի մըն էր, այլ իրապէս զրեցաւ մը, հեղինակ ԵՍԱՅԻ ՆՁԵՑՈՒ համար գրուած Աստուածաշունչներուն: Բոլորովին անհեթեթ է խորհիլ որ Յով. Ծործորեցի երբեք ինքզինքը յիշելու համար գործածէր ԾՈՐԾՈՐԵՑԻ, ԵՐԶՆԿԵՑԻ եւ ՊԼՈՒԶ...: Ասիկա միայն կատարուած կրնայ ըլլալ կեղծարար մը որ կ'ուզէ (կարծես իր խորունկ տգիտութիւնը սպացուցանելու համար) ԾՈՐԾՈՐԵՑԻԻՆ եւ ՊԼՈՒԶԻՆ անկարելի նոյնութիւնը... նոյնացնել: Աւարկելի խեղճութիւն:

Յիշատակարանի այս կեղծարարութիւնը կատարուած է մէկու մը կողմէ, որ ղժբախտաբար չի ալ կրնար իր տգիտութիւնը՝ Ա. թորոտեան եւ ուրիշ նման կեղծանուններու տակ սրարտել: Այս պարունակներ, օրինակ՝ Նոր Զուգայեցի Մինաս վարդապետին մասին. ուրիշ անգամ մը հաշմած էր գոյութիւն ունեցող որմանկարային յիշատակարաններ:

Դժբախտաբար մեր իրականութեան մէջ կը յայտնուին երբեմն բանագործութիւններ. սակայն յիշատակարան կեղծել, յիշատակարան խարդախել, անորակելի գործ մըն է, որուն հեղինակը չեմ գիտեր ինչպէս ներկայացնել, թէեւ տարիներ առաջ մեղմէ իսկ խայտառակուած:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ